ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

SAINT GREGORY THE ILLUMINATOR
MEDICAL CENTER

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՓԲԸ-Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ

«Հաստատում եմ»
«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ԲԿ ՓԲԸ
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի նախագահ՝
_____ Ռ. Սարգսյան
«01» 03. 2024թ

«ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ԲԿ ՓԲԸ -Ի ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ /ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ/

ԵՐԵՎԱՆ 2024

Ի. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պետական բժշկական քոլեջը գնահատումը դիտարկում է որպես կրթական ծրագրերի շարունակական բարելավման, դասավանդման արդյունավետության բարձրացման և ուսանողների ուսումնառության որակի ապահովման ռազմավարական գործիք:
2. Սույն քաղաքականությունը մշակվել է՝ ելնելով ՀՀ օրենսդրությունից և ազգային կրթական չափորոշիչներից, ինչպես նաև լավագույն կրթական փորձից, և նպատակ ունի ապահովել ուսումնական ծրագրերի և ուսումնառության որակի շարունակական բարելավում:
3. Քոլեջում գնահատման գործընթացը պետք է կազմակերպվի և իրականացվի համակարգված, թափանցիկ, օբյեկտիվ և հիմնավորված սկզբունքների հիման վրա՝ ապահովելով ՈՆԱ մեխանիզմների շարունակական զարգացումը:
4. Գնահատման գործընթացը համարվում է արդյունավետ, եթե այն՝
   - իրականացվում է համակարգված և շարունակական կերպով,
   - ծառայում է ինքնավերլուծության և ինքնազարգացման նպատակներին,
   - հիմնված է հստակ չափանիշների և չափման գործիքների վրա,
   - կիրառվում է որպես կառավարման և որոշումների կայացման գործիք,
   - նպաստում է ծրագրերի և գործընթացների բարելավմանը,
   - ներառում է ուսանողների, դասախոսների և այլ շահագրգիռ կողմերի մասնակցությունը:

4. Քաղաքականության նպատակը

Սույն քաղաքականության նպատակն է սահմանել կրթական ծրագրերի և ուսումնառության որակի գնահատման սկզբունքները, ուղղվածությունը, մեխանիզմները և պատասխանատվության շրջանակները:

5. Կիրառման ոլորտը

Քաղաքականությունը կիրառվում է հետևյալ ոլորտներում՝

- ուսումնական ծրագրերի մշակում և իրականացում,
- ուսանողների ուսումնառություն և ուսումնառության արդյունքներ,
- դասավանդման որակ,

- կրթական ծրագրերի իրականացման ռեսուրսների ապահովում,
- գնահատման գործընթացի կառավարում և բարելավում:

6. Հիմնական հասկացություններ

6.1 Գնահատում

Գնահատումը համակարգված գործընթաց է, որի ընթացքում սահմանված չափանիշների հիման վրա իրականացվում է դատողություն ուսումնական ծրագրերի, դասավանդման, ուսումնառության արդյունքների և կրթական ռեսուրսների արդյունավետության վերաբերյալ (Հավելված 1):

Գնահատման նպատակներն են՝

- ուսումնական պլանների և ծրագրերի բովանդակության գնահատում,
- դասավանդման արդյունավետության գնահատում,
- ուսանողների ուսումնառության արդյունքների չափում,
- ուսումնառության ընթացքում աջակցություն ուսանողներին,
- ռեսուրսների արդյունավետության մշտադիտարկում:

6.2 Ուսումնառության արդյունքներ

Ուսումնառության արդյունքները սահմանում են այն գիտելիքները, հմտությունները և կարողությունները, որոնք ուսանողը պետք է ցուցաբերի կրթական ծրագրի ավարտին: Դրանք ենթակա են չափման և գնահատման:

6.3 Գնահատման չափանիշներ

Գնահատման չափանիշները և ցուցիչները սահմանում են կրթական ծրագրերի բովանդակության, իրականացման և արդյունքների համապատասխանությունը սահմանված պահանջներին, այդ թվում՝ աշխատաշուկայի պահանջներին և մասնագիտական ստանդարտներին:

Դրանք ապահովում են գնահատման գործընթացի օբյեկտիվությունը, հավաստիությունը և համադրելիությունը:

6.4. Հետադարձ կապ

Գնահատման համակարգը ներառում է հետադարձ կապի մեխանիզմներ, որոնք հնարավորություն են տալիս գնահատել կիրառվող մեթոդների արդյունավետությունը և կատարել անհրաժեշտ բարելավումներ:

Հետադարձ կապն իրականացվում է շահակիցների մասնակցությամբ՝ հարցումների, քննարկումների և այլ մեխանիզմների միջոցով: Ստացված տվյալները օգտագործվում են գնահատման համակարգի կատարելագործման և որոշումների կայացման համար:

7. Գնահատման քաղաքականությունից բխող փաստաթղթեր

Քաղաքականությունից բխում են հետևյալ փաստաթղթերը՝

- Գնահատման ընթացակարգեր,
- Գնահատման չափանիշներ և ցուցիչներ,
- Գնահատման ձևաթղթեր և գործիքներ:

8. Իրավասություններ և պատասխանատվություն

Գնահատման քաղաքականության մշակման, ներդրման և իրականացման պատասխանատուներն են՝

- ուսումնամեթոդական գծով փոխտնօրենը,
- ամբիոնների ղեկավարները,
- որակի ապահովման պատասխանատուները:

9. Քաղաքականության վերանայում

Սույն քաղաքականությունը ենթակա է պարբերական վերանայման և անհրաժեշտության դեպքում փոփոխման՝ սահմանված ընթացակարգերի համաձայն:

Հավելված 1

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՍԽԵՄԱ

ՔԱՅԼ 1.
ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

ՔԱՅԼ 2.
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՔԱՅԼ 3.
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՈՐՈՇՈՒՄ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄ

ՔԱՅԼ 4.
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄ

ՔԱՅԼ 5.
ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՔԱՅԼ 6.
ՀԵՏԱԴԱՐՁ ԿԱՊ

ՔԱՅԼ 7.
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

ՔԱՅԼ 8.
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅՈՒՆ

ՔԱՅԼ 9.
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԿԱՅԱՑՈՒՄ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

Հաստատված է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ»
պետական բժշկական քոլեջի
տնօրինական խորհրդի կողմից
01.03.2024 թ. (արձանագրություն № 2)

Ի. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

1. Կրթական ծրագրերի որակի գնահատման նպատակները

Կրթական ծրագրերի գնահատումը հիմք է հանդիսանում նրա բաղադրիչների որակի բարելավման, ինչպես նաև որակի ապահովման մշակույթի ձևավորման և հաստատման համար: **Կրթական ծրագրի գնահատման նպատակներն են՝**

– **Բարելավում.** գնահատման գործընթացը պետք է ապահովի հետադարձ կապ շահակիցներից, որոշելու համար թե կրթական ծրագիրը ինչպես բարելավել:

– **Տեղեկատվություն**. գնահատման գործընթացը պետք է ապահովի տեղեկատվությամբ ամբիոններին և այլ որոշումներ կայացնողներին՝ հետագա գործընթացներն կազմակերպելու և իրականացնելու համար:

– **Աջակցություն**. գնահատման գործընթացը պետք է աջակցի որոշումների կայացման գործընթացներին, որոնցից են կրթական ծրագրի վերանայումը, ռազմավարական պլանավորումը, հավատարմագրումը:

2. Կրթական ծրագրերի որակի գնահատման խնդիրները՝

– ստուգել նրա բաղադրիչների վիճակը,
– մշտադիտարկել ըստ գնահատման ցուցիչների,
– բացահայտել թերությունները,
– կազմակերպել ուղղիչ գործողություններ,
– բարելավել կրթական ծրագրի որակը:

3. Գնահատման օբյեկտները՝

– ուսումնական պլանը,
– առարկայական ծրագրերը,
– դասավանդման գործընթացը,
– ուսումնառության արդյունքները,
- կրթական և դասավանդման ռեսուրսները,
– ուսանողների գնահատման մեթոդները:

4.Գնահատման ցուցիչները

Կրթական ծրագրի գնահատումն իրականացվում է ըստ գնահատման ցուցիչների, որոնք ներառում են՝ /դեղինովը ավելացրել ենք/

4.1. Նպատակների համապատասխանություն

- Ծրագրի նպատակների համապատասխանությունը ազգային և ոլորտային որակավորման շրջանակներին
- Պետական կրթական չափորոշիչներին համապատասխանություն

4.2. Գործընթացների որակ

- Դասավանդման մեթոդների արդյունավետություն
- Գնահատման համակարգի արդարացիություն և թափանցիկություն
- Ռեսուրսների բավարարություն

4.3 Արդյունքների որակ

- Ուսանողների ձեռքբերումներ
- Ավարտական արդյունքների համապատասխանություն նախատեսված ելքային կարողություններին
- Գործատուների բավարարվածություն

Ցուցիչները պետք է լինեն՝

- չափելի (քանակական կամ որակական),
- կիրառելի կառավարման որոշումների համար,
- համապատասխան հավատարմագրման պահանջներին
- պարբերաբար վերանայվող և արդիականացվող:

5.Գնահատման մեթոդներ

Կրթական ծրագրի բաղադրիչների գնահատումն իրականացվում է՝

- հարցումների (ուսանողական, դասախոսական, գործատուների),
- ֆոկուս-խմբային քննարկումների,
- փաստաթղթային վերլուծության,
- մշտադիտարկման և վիճակագրական տվյալների ուսումնասիրման միջոցով՝ համաձայն հաստատված գնահատման ցուցիչների:

6. Իրավասություններ և պատասխանատվություն

6.1. Ուսումնական պլանի գնահատում

Ուսումնական պլանի գնահատման համար իրավասու են՝

- ուսումնամեթոդական խորհուրդը,

- որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժինը:

Ուսումնական պլանների գնահատման գործընթացում ներգրավվում են նաև արտաքին շահակիցներ՝ կրթության և համապատասխան մասնագիտական ոլորտի ներկայացուցիչներ:

6.2. Առարկայական ծրագրերի գնահատում

Առարկայական ծրագրերի գնահատման համար պատասխանատու են՝

- ուսումնամեթոդական խորհուրդը,
- որակի ապահովման բաժինը:

6.3. Դասավանդման գործընթացի գնահատում

Դասավանդման գործընթացի գնահատման համար իրավասու են՝

- ուսանողները,
- որակի ապահովման հանձնախումբը:

6.4. Ուսումնառության ռեսուրսների գնահատում

Ուսումնառության ռեսուրսների ապահովվածության գնահատումն իրականացվում է՝

- որակի ապահովման հանձնախումբը,
- ուսանողները:

6.5. Դասավանդման ռեսուրսների գնահատում

Դասավանդման ռեսուրսների ապահովվածությունը գնահատվում է՝

- որակի ապահովման հանձնախմբի,
- դասավանդող անձնակազմի կողմից:

6.6. Ուսանողների ունակությունների գնահատում

Ուսանողների գիտելիքներն ու կարողությունները գնահատվում են դասավանդող անձնակազմի կողմից՝ հաստատված գնահատման մեթոդների համաձայն:

6.7. Ուսանողների գնահատման մեթոդների գնահատում

Ուսանողների գնահատման մեթոդները ուսումնասիրվում և գնահատվում են՝

- ուսումնամեթոդական խորհուրդների,
- որակի ապահովման հանձնախմբի կողմից:

7. Հետադարձ կապ

- Կրթական ծրագրերը գնահատելիս հետադարձ կապ է ապահովվում ուսանողների, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և այլ շահակիցների հետ (գործատուներ, մասնագիտական խորհրդատուներ):

Հետադարձ կապի հավաքագրումը իրականացվում է հարցումների, ֆոկուս-խմբերի, հարցազրույցների և այլ հստակ հաստատված մեթոդների միջոցով՝ ապահովելով տվյալների թափանցիկություն և ներկայացվածության հստակություն:

8. Տվյալների օգտագործում կրթական ծրագրի բարելավման համար

Կրթական ծրագրերի մշտադիտարկման և ստուգումների ընթացքում հավաքագրված տվյալները պահվում են որակի ապահովման հանձնախումբի փաստաթղթերում, ենթարկվում են վերլուծության, որակական և քանակական գնահատման: Դրանք հիմք են ծառայում կրթական ծրագրերի բարելավմանն ուղղված որոշումների կայացման ժամանակ:

9. Մասնագիտությունների կրթական ծրագրերի /ՄԿԾ-երի/ գնահատման մեխանիզմներ

- ՄԿԾ-երի գնահատում ուսումնական հաստատության շահակիցների անկետավորման միջոցով:
- ՄԿԾ-երի որակավորման ազգային և ոլորտային շրջանակներին /ՈԱՇ, ՈՈՇ/, պետական կրթական չափորոշիչներին /ՊԿՉ/ համապատասխանության գնահատում:
- ՄԿԾ-երի գնահատում որակի ապահովման արտաքին փորձագետների կողմից (ծրագրային արտաքին աուդիտ):
- ՄԿԾ-ներում ներառված առարկայական ծրագրերի (մոդուլների) ներքին գնահատում կրթության որակի վերահսկման հանձնաժողովի կողմից:
- Առարկայական ծրագրերի մասնագիտական գրախոսություն ներքին և արտաքին մասնագետ-փորձագետների կողմից:
- ՄԿԾ-երի բաղադրիչների գնահատում անկետավորման, ներքին և արտաքին աուդիտների միջոցով:
- ՄԿԾ-երի գնահատում ծրագրային հավատարմագրման ժամանակ:

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՏՐԻՑ

Փուլ	Նկարագրություն	Մեթոդներ/Ցուցիչներ	Պատասխանատուներ
1. Նպատակների և խնդիրների սահմանում	ԿԾ գնահատման հիմնական նպատակների և խնդիրների հստակեցում	Բարելավում, տեղեկատվություն, աջակցություն	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման բաժին
2. Գնահատման օբյեկտների ընտրություն	Որոնել և առանձնացնել գնահատման օբյեկտները	Ուսումնական պլան, առարկայական ծրագրեր, դասավանդման գործընթաց, ուսանողների արդյունքներ, ռեսուրսներ	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման բաժին
3. Գնահատման ցուցիչների սահմանում	Սահմանել չափելի և կիրառելի ցուցանիշներ	Նպատակների համապատասխանություն, գործընթացների որակ, արդյունքների որակ	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման հանձնախումբ
4. Գնահատման մեթոդների կիրառություն	Ընթացակարգի փուլային գնահատում՝ ըստ ցուցիչների	Հարցումներ (ուսանող, դասախոս, գործատու), ֆոկուս-խմբեր, փաստաթղթային վերլուծություն, մշտադիտարկում, վիճակագրական տվյալներ	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման բաժին
5. Իրավասություններ և պատասխանատվություն	Սահմանել, թե ով է պատասխանատու յուրաքանչյուր օբյեկտի համար	- Ուսումնական պլան → ուսումնամեթոդական խորհուրդ, որակի բաժին, արտաքին շահակիցներ - Առարկայական ծրագրեր → ուսումնամեթոդական խորհուրդ, որակի բաժին - Դասավանդում → ուսանողներ, որակի հանձնախումբ - Ռեսուրսներ → ուսանողներ, դասախոսներ, որակի բաժին - Ուսանողների ունակություններ →	Տվյալ անձինք ըստ օբյեկտների

		դասախոսներ	
6. Հետադարձ կապ հավաքագրում	Հետադարձ կապի ապահովում բոլոր շահակիցներից	Հարցումներ, ֆոկուս-խմբեր, հարցազրույցներ	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման հանձնախումբ
7. Տվյալների վերլուծություն և օգտագործում	Հավաքագրված տվյալների վերլուծություն, գնահատում և բարելավման առաջարկներ	Քանակական և որակական վերլուծություն	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման բաժին
8. Մասնագիտությունների կրթական ծրագրերի (ՄԿԾ) գնահատում	Արժևորել ծրագրերի համապատասխանությունը ազգային/ոլորտային շրջանակներին	Ավելացված մեխանիզմներ՝ անքետավորում, ներքին և արտաքին աուդիտ, ծրագրային հավատարմագրում, մասնագիտական գրախոսություն	Ուսումնամեթոդական խորհուրդ, որակի ապահովման հանձնախումբ, արտաքին փորձագետներ
9. Ուղղիչ գործողությունների իրականացում	Բարելավման առաջարկների իրագործում՝ հիման վրա գնահատման արդյունքների	Փոփոխություններ ուսումնական պլաններում, առարկայական ծրագրերում, դասավանդման մեթոդներում	Ուսումնամեթոդական խորհուրդ, բաժինների ղեկավարներ

II.ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Այս քաղաքականությունը կարգավորում է քոլեջում կրթության որակի գնահատման ցուցիչների մշակման, օգտագործման և մշտադիտարկման գործընթացները:
2. Քոլեջում կրթության որակի գնահատման ցուցիչների համակարգը սահմանում է օբյեկտների (ուսումնառողներ, կրթական ծրագրեր, ստորաբաժանումներ, կրթական ծառայություններ, ռեսուրսներ) **որակական և քանակական** գնահատման մեթոդները:
3. Քոլեջի բոլոր ստորաբաժանումները պարտավոր են հետևել այս քաղաքականության պահանջներին:
4. Մշտադիտարկումը և տվյալների հավաքագրումը կազմակերպվում են **Որակի վերահսկման և ինքնավերլուծության բաժնի** կողմից:

2. ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Ցուցիչների համակարգը բնութագրվում է կրթության որակի հիմնական տարրերով (նպատակ, գործընթացների որակ, արդյունքների որակ):
6. Կրթության որակի գնահատման համակարգում օգտագործվող ցուցիչների կոմպլեքսը համապատասխանում է հետևյալ հատկանիշներին՝
   ա) կառավարչական որոշումների ընդունման համար և հավատարմագրման գործընթացում օգտագործման նպատակահարմարություն,
   բ) քոլեջում կրթության զարգացման գերակա խնդիրների բացահայտման և լուծման արդիականություն,
   գ) որակական և քանակական չափումների իրականացման հնարավորություն:

3. ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

7. Ցուցիչների համակարգն ունի մատրիցի կառուցվածք և ենթադրում է գնահատում ըստ օբյեկտների:
8. Ցուցիչները մշակվում են գնահատվող հետևյալ հիմնական օբյեկտների համար՝
   ա) ուսումնառողների ձեռք բերումների գնահատում,
   բ) կրթական ծրագրերի գնահատում,
   գ) ստորաբաժանումների գնահատում,
   դ) կրթական ծառայությունների գնահատում,
   ե) կրթական ռեսուրսների գնահատում:

4. ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ԵՎ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՐԱԿԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ

9. Մշտադիտարկումն իրականացվում է ըստ որակի ապահովման ստորաբաժանման կողմից սահմանված որակի գնահատման ցուցիչների համակարգի:
10. Մշտադիտարկումը իրականացվում է 2 ձևով՝ անհատական (անընդհատ հարցումներ և հաշվետվողական ցուցանիշներ) և պարբերական մշտադիտարկում:
11. Մշտադիտարկման անցկացումը ենթադրում է ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաների լայն կիրառումը ինֆորմացիայի հավաքագրման, մշակման, պահպանման և օգտագործման բոլոր փուլերում:
12. Մշտադիտարկման իրականացումը ենթադրում է հետևյալ գործողությունների հաջորդականությունը՝
    ա) մշտադիտարկման ենթակա օբյեկտի որոշում և հիմնավորում,
    բ) մշտադիտարկման համար օգտագործվող տվյալների հավաքագրում ըստ գրանցման ձևերի,
    գ) տվյալների հենքի ստեղծում,
    դ) մշտադիտարկման ընթացքում ստացված տվյալների մշակում,
    ե) մշտադիտարկման ընթացքում ստացված տվյալների վերլուծություն և մեկնաբանում,
    զ) մշտադիտարկման արդյունքների թափանցիկության ապահովում:
13. Կրթության որակի գնահատման արդյունքների օգտագործողներն են՝
    ա) ուսումնառողները,
    բ) պրոֆեսորադասախոսական անձնակազմը,
    գ) վարչական անձնակազմը,
    դ) գործատուները,
    ե) պետական մարմինները և այլն:
14. Գնահատման ընթացակարգերի արդյունքները հիմք են հանդիսանում հիմնարար որոշումների կայացմանը:

5. ՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ

5.1. Նյութատեխնիկական ռեսուրսներ

Մուտքային ցուցիչներ	Գործընթացային ցուցիչներ	Ելքային ցուցիչներ
Ուսումնական կաբինետների, լաբորատորիաների և լսարանների նյութատեխնիկական բազայի ապահովվածություն	Լսարանային ուսումնառության արդյունավետություն (լսարանային աշխատանքների արդյունավետություն)	Ուսումնառության ձեռք բերումներ (գիտելիք, հմտություն)
Գիտական գրադարանի նյութատեխնիկական բազայի ապահովվածություն (գրականություն, էլեկտրոնային գրադարան)	Ուսումնառության արդյունավետություն (գրադարան հաճախողների թիվը, գրադարանի բազայի արդյունավետությունը)	Ուսանողի բավարարվածություն (հարցում)
Լաբորատորիաների, մասնագիտական ուսուցման նպատակով զբաղեցրած տարածքների նյութատեխնիկական բազայի ապահովվածություն (կահավորվածությունը)	Գործնական աշխատանքների արդյունարարություն (մասնակցության տոկոսը)	Գործնական աշխատանքների արդյունավետության մակարդակ (տպագրված աշխատանքների տոկոսը)
Տեղեկատվական համակարգի ապահովվածություն	Տեղեկատվական համակարգի միջոցով գործընթացների կազմակերպման արդյունավետություն (քանի տոկոսով է աշխատում)	Դասախոսների և ուսանողների բավարարվածություն

5.2. Մարդկային ռեսուրսներ

Մուտքային ցուցիչներ	Գործընթացային ցուցիչներ	Ելքային ցուցիչներ
Որակավորում ունեցող դասախոսական անձնակազմի տոկոսը	Դասավանդման արդյունավետությունը (ուսանողների կարծիքը, որակի գնահատման հանձնաժողովի կարծիքը)	Շրջանավարտների բավարարվածությունը (հարցում) Ուսանողների . բավարարվածություն (հարցում)
Ուսումնառողի ունակություններ	Ուսումնառության ընթացքում առաջադիմության մակարդակը	Գործատուի բավարարվածություն

5.3. Կրթական ծրագրերի գնահատում

№	Ցուցիչ	Գնահատման սանդղակ				
		1	2	3	4	5
1.	ՄԿԾ-ի համահունչությունը պետական կրթական չափորոշիչներին					
2.	ՄԿԾ-ի նկարագրությունը ըստ պահանջների					
3.	ՄԿԾ-ի բովանդակային համապատասխանությունը պետական կրթական չափորոշիչներին					
4.	Դասավանդման և ուսումնառության մեթոդների համապատասխանությունը ուսումնառության արդյունքներին					
5.	Առարկայական ծրագրերի համապատասխանությունը ուսյալաններին					
6.	ՄԿԾ-ն բովանդակային առումով համահունչ է այլ ճանաչված ՄԿԾ-երին					
7.	Շրջանավարտների տոկոսը					
8.	Ուսումը շարունակողների տոկոսը					
9.	Աշխատանքի տեղավորվողների տոկոսը					
10.	Շրջանավարտների աշխատանքի տեղավորվածների տոկոսը					
11.	Շրջանավարտների ավարտական արդյունքներ					
12.	Գործատուների արձագանք (հարցում)					
13.	Արտաքին աուդիտների արդյունքներ					

* 1 – համապատասխանում է, 2 – համապատասխանում է 85%-ով, 3- համապատասախանում է 50%-ից ավել, 4- համապատասխանում է 50%-ից պակաս, 5- չի համապատասխանում:

5.4. Դասավանդման և ուսումնառության միջավայր

№	Ցուցիչ	Գնահատման սանդղակ				
		1	2	3	4	5
1.	Ըստ դասավանդվող առարկայի և դասավանդման ձևի առանձնահատկության դասավանդման մեթոդների կիրառում (հարցում ուսանողների շրջանակներում)					
2.	Դասավադողի որակավորումները և դասավանդման փորձը՝ ○ Մասնագիտական կրթություն ○ Վերապատրաստման վկայական ○ Գործնական աշխատանքներ ○ Դասավանդման ստաժ					
3.	Դասավանդման ռեսուրսներ՝ ○ Համակարգչային տեխնիկա ○ Մասնագիտական ծրագրային փաթեթներ ○ Սարքավորումներ և նյութեր ○ Ինտերնետ կապի առկայություն					
4.	Ուսումնառության ռեսուրսներ՝ ○ Մասնագիտական գրականություն ○ Ինտերնետ կապով լսարաններ ○ Նյութատեխնիկական բազա					